ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 2017 թվականի մարտի 17-ի բողոքով ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 17.03.2017թ. բողոքով ԳԲԽ-32/17 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի բանակցային ընթացակարգի հանձնաժողովի 2017 թվականի մարտի 9-ի թիվ 1 որոշմամբ հաստատված և հրապարակված հայտարարությունը՝ արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմքով Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ՔՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով նոր ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը, տվյալ ծածկագրով գնման ողջ գործընթացը, ինչպես նաև հայտերի ընդունման և բացման գործընթացը կասեցնելու վերաբերյալ ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Անդամներ՝ **Հարություն Մարտիրոսյան**

Մարտիկ Նալբանդյան